

## Կարինե ԲԱԶԵՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՆ ՈՒ ՀԱՅԿԵՐՈՒՅԹԸ

Ուտեստը ցանկացած էր նոսիք կենսապահովման համակարգի կարևորագոյն բաղադրիչն է: Ի տարբերություն նյութական մշակույթի այլ ոլորտների (հագուստ, բնակարան, հաղորդակցության ու կասպի միջոցներ և այլն)՝ այն առավել պահպանողական է, քանի որ սենյակ տեսակները, դրանց պատրաստման եղանակներն ու սենյային ռեժիմը ավելի կայուն են և համեմատարար անդարս են պահում ազգային հնագույն ավանդույթները:<sup>1</sup> Դա պայմանավորված է էրնոսի հոգեբանական նախատրամադրվածությամբ, որն առաջացել է դարեր շարունակ սննդի որոշակի տեսակներ ընդունելու սովորույթի, կամ հնագույն սենյային արգելություն հետևածու:<sup>2</sup>

Ինչպես ողջ ժողովրդին, այնպես էլ նրա առանձին հատվածին բնորոշ սննդամբերին, որա մշակման եղանակների, ճաշատեսակների տիպերի, հացկերույթի սովորույթների ու մշակույթի այլ ոլորտների մեջ են դրսևրվում նրանց էթնոմշակութային և պատմական առանձնահատկությունները: Սննդի մասին չի կարելի խոսել առանց հացկերույթի արարողության, քանի որ ուտեսաի համակարգում առկա ազգագրական տարբերությունները արտահայտվում են նաև հացկերույթում՝ ուտելու համախականության ու կազմի, մասունգող ուտելիքների քանակի ու հերթականության մեջ և այլ տարրերում:<sup>3</sup>

Սնունդը ոչ միայն բավարարում է մարդու կենսաքանական պահանջը, այլև նպաստում է մարդկանց մեջ սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Խորիդային նշանակոր ազգագրագու U. Տոկարը գրում է. «Միասին ուտելն ու խմելը մարդկանց մեջ բարեկամության ու ազգակցության արտահայտությունն չէ միայն: Միասին ուտելն ու խմելը հաճախ նպաստում է ընկերական ու բարեկամական հարաբերությունների հաստատմանը»:<sup>4</sup> Աղ ու հացով հյուրին (հյուրերին) դիմավորելը հարգանքի, մեծարնան, բարեկամության արտահայտությունն է աշխարհի շատ ժողովուրդների մշակույթում: Սոցիալական հարաբերությունների հաստատումից բացի ուտեսար կատարում է նաև հակառակ՝ սոցիալական տարանջատման գործառույթ: Խոսքը վերաբերում է ուտելու ժամանակ սեռատարիքային շերտադասության դրսուրնանը, որը բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում նաև հաւերի ավանդական մշակութին:

**Պատմազգագրական տեսանկյունից** մնձ հետաքրքրություն են ներկայացնում ամենօրյա կերպարներից տարբերվող, տոնական կամ ծիսական նշանակություն ունեցող, կոնկրետ տոնին, ծեսին կամ արարողությանը բնորոշ ուժեղիքի տեսակները։ Ազգագրական առողջության կարևոր է ոչ միայն այն, թե ինչ են ուսում նարդիկ, այլև, թե ինչպես են ուսում, ինչ սպասք են օգտագործում, օրը քանի՞ անգամ են ուսում, ովքեր և ինչպես են մասնակցում հացկերությն և այլն։<sup>5</sup> Այս և նմանատիպ այլ երևույթների մեջ են արտահայտվում նաև քաղաքային ուսեսափառ համակարգի առանձնահատկությունները, որին կամորթառնանք ստորև:

Խնդիր չունենալով տալ խոր և համակրղման վերցություն՝ մեր ցանկությունն է ամրողական, թեև ոչ ծավալուն ձևով ներկայացնել Ակերսանդրապոլի ուստատի ու հացկերությը, նկատի ունենալով, որ առաջմն այդայնի ամփոփ ուստամնափրություն չկա: Հայ ազգագրության մեջ Շիրակի ուստեատը տիպարանվել ու համակարգվել է հետա-

<sup>1</sup> Н. Григорьевич. Этническая экология питания. М., 1996, стр. 7.

<sup>2</sup> Н. Волкова, Г. Джавахишвили, *Бытовая культура Грузии XIX-XX веков: традиции и инновации*. М., 1982, стр. 80.

<sup>3</sup> Культура жизнеобеспечения и этнос. Ер., 1983, стр. 189-190.

<sup>4</sup> С. Токарев, К методике этнографического изучения материальной культуры, "Советская этнография" 1974, №4, стр. 5.

<sup>5</sup> Культура жизнеобеспечения и этнос, стр. 190.

գոտողների խմբի կողմից (Ս.Հարույոնով, Յու.Մկրտչյան, Ի.Բարսեղյան, Ս.Ենգիբարյան)<sup>6</sup>, սակայն Ալեքսանդրապոլի ուստիստն մասին միայն մի քանի գեկուցումներ են եղել, որոնց թեզերը բավարար չեն բաղադրային կենցաղամշակութային համալիրի այդ կարևոր հատվածը լիարժեք ներկայացնելու համար:<sup>7</sup>

Ալեքսանդրապոլը XIX դարավերջին արդեն ձևավորված, յուրօրինակ կենցաղամշակութային համալիրով բաղադր էր, որի բնակիչներն իրենց խստորեն տարրերում էին ինչպես բաղադր տեղաբնակ, այնպես էլ հարևան գյուղերից վերաբնակվածներից՝ «գեղցոնցից»։ Ալեքսանդրին սիրում էր իր բաղադրը, նրա ավանդույթները, բարբառը, նիստուկացը՝ աշխատելով սրբությամբ պահպանել այն, հարազատ մնալ դրանց։ Դա արտահայտվում էր և՝ ամբողջությամբ վերցրած կենցաղավարության մեջ, և դրա առանձին տարրերում, որոնցից է ուստիստը։

Ալեքսանդրապոլիցիների կերակրացանկը հարուստ էր։ Բացի ավանդական գեղցկական համարվող կերակրություններից, որոնք մեծ տեղ էին գրավում սննդի համակարգում, կային գուտ քաղաքային և հատկապես Ալեքսանդրապոլին բնորոշ ուստիստներ, որոնց պատրաստմամբ աշքի էին ընկնում և պարծենում էին կանաքը։ Սնունդը շափականց բազմազան էր և կազմված էր հացահատիկային մթերքներից, մսերներից (այդ թվում ոչխար, տավար, այծ, հավ, ձուկ), կարենենից, բանջարենենից, լոբազիներից, վայրի բույսերից, մրգերից ու դրանց շերից և այլն.<sup>8</sup> Կերակրությունը տարբերվում էին ըստ «պաս» և «ուսիս» օրերի, ամենօրյա, տոնական և ծիսական կերակրությունների։

Ուստեղիքի պատրաստությունը կնոջ այն կարևորագույն գործերից էր, որտեղ դրսւորվում էր նրա տնարարությունն ու տնտեսավարությունը։ Խստաշունչ ու երկարատև ձմռանը, երբ փակվում էին բոլոր ճանապարհները, և այլ տեղերից մթերք չեր բերվում, ալեքսանդրին ստիպված էր սնունդը նախապես պաշարել։ Բացի այդ, գյումրեցիները հիմնականում արհեստավորներ էին և հատկապես շինարարներ, որոնք աշխատում էին զարնանից մինչև ուշ աշուն, ուստի աշխատած փողով ողջ տարվա պարենի ու վառելիքի պատրաստությունը, ինչպես ժողովուրդն է ասում «ձմեռվա թաղարութը», նախօրոք էին տեսնում։<sup>9</sup> Կանայք գարնանից գրադիւնը էին դրանու։ Անոնում էին դաղձ, եղինջ, սիրեխ, սինձ, երիժնակ, ժախ, ավելուկ, թելուկ, զմի, դանդուռ, բրնձուկ, խավիծիլ, ծներենկ, դանձիլ, ձնձլոց, ճնճղպաշար, շրեշ, պատառուկ, փիփերք, քեն, ողրմանկոք կամ վարդապետի ժախ, որոնց մի մասը ուստում էին բարմ վիճակում, մի մասը չորացնում էին, մյուսը՝ թքու դնում։<sup>10</sup>

Մայիսի վերջերից յուղ ու պանրի «քաղաքարութի» ժամանակն էր։ Տանտիկինները այնքան յուղ էին հալում, որը պիտի բավականացներ ողջ ընտանիքի պահանջմունքը մինչև նոր յուղի հալելը։ Ստացված յուղը լցնում էին կավեցնաների մեջ և բերանը փակում սերեկով։ Սերեկը ստանում էին ոչխարի ստամոքսը լավ վերամշակելով։ Այն խոնալ վիճակում քաշվում էր յուղի ամանի բերանին ու ամուր կապվում։ Չորանալուց հետո սերեկը կծկվում, հերմետիկ փակում էր զնամնի բերանը ու չեղ թռնում օդ անցն ներս։ Նույն ձևով պահում էին նաև տարբեր տեսակի պանիրները։

Անոանը չորացնում էին կանաչ լորին, պատրաստում նուրաբաները (ընկույզի, վարդի, բայի, հոնի, խնձորի և այլն)։ Զնոան համար մեծ քանակությամբ գնում էին գլուխ (քյալլա) սոխ և ծլակ-կանաչ սոխ։ Ուշ աշնանը բանջարեղենի պաշարի հավաքումն էր՝

<sup>6</sup> Կոլուտրա յէսնեօծեսպեչենի և տոնօս, стр. 190.

<sup>7</sup> Տե՛ս <Աղարելյան, Հացի պատրաստման արարողակարգը Ալեքսանդրապոլում. հացի պաշտամութիւն, Ծիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետ՝ ԾՊՄԺ) համբասպետական երկրորդ գիտաժողովի գեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 63: Նույնի՝ Աղմարկ Ալեքսանդրապոլու կերակրացանից, ԾՊՄԺ համբասպետական երրորդ գիտաժողովի գեկուցումների հիմնադրութներ, Գյումրի, 1998, էջ 42-43։

<sup>8</sup> Կոլուտրա յէսնեօծեսպեչենի և տոնօս, стр. 208-234.

<sup>9</sup> Հ. Գ. ո լ ե ց յ ա ն, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվ, տեսք 1, 1976, էջ 20-27։

<sup>10</sup> Ն. Ն. կ ո ղ ո ս յ ա ն, Լենինական, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության արխիվ, FF II, էջ 7229-7252։

գազար, բողկ, շաղցամ, կարմիր բազուկ, դրում, կաղամբ, արդեն մուտք գործած կարտոֆիլ, լոլիկ և այլն: Կաղամբը, կարմիր ու սպիտակ բազուկը, շաղցամը, բացի թարմ վիճակով պատելուց, նաև քրու էին դնում: Հատկապես քրու կաղամբով շատ կերակրատեսակներ էին պատրաստում՝ մսով ու պասուց տղմաներ, քռչկ, կոնջոլ: Կաղամբի հետ քրու էին դնում գազար, սոխ, կանաչ լոլիկ, կանաչ պղպեղ: Շատ էին սիրում ծիծակի քրու: Կարմիր պղմիդրոր աղ էին դնում կամ չորացնում: Չորացնում էին դրում, որը օղակաձև կտրուում ու կախում էին: Չորացնում էին նաև ոչխարի տոտիկները, որոնք լավ մաքրում, ապա կախում էին, ճմռանը «տոտոխ»՝ տոտիկներով խաչ դնելու համար: Ուշ աշնանը պատրաստվում էր դաշուրման՝ մեկ ոչխարով կամ երինջով՝ նայած ընտանիքի կարողության:

Վերը թվարկած բոլոր ուտելիքներն ունեին պատրաստման իրենց հատուկ եղանակները և պահելու համար նախատեսված համապատասխան կարասին: Գյումրեցի կինը երբեք յուղի, պանրի կամ քրուների ամանները մեկը մյուսի փոխարեն չեղ օգտագործում, որովհետև դրանցից յուրաքանչյուրում իր առանձնահատուկ համն ու հոտն ուներ, որը կպնում էր ամանին ու կարող էր փշացնել այլ մթերքի համը: Ընդունված չեղ նաև ամանները օճառով լվանալը, քանի որ օճառը համարվում էր անմաքուր: Լվանում էին տաք ջրով մի քանի անգամ, ապա պարզացրում գոյ ջրով:

Հարկ ենք համարում թվարկել այն ամանները, որոնք տարածված էին գյումրեցիների կենցարում մինչև XX դարի սկիզբը: Լայն գործածություն ունեին կավել և պինձյա ամանները, ավելի քիչ՝ փայտից պատրաստվածները: Կավել ամանները էին.

**բղողներ- 1մ 10սմ բարձրությամբ, ներսը ծրած կարասներ՝ քրու դնելու համար.**

**բուլու /թոիկ-/կես մետր բարձրությամբ, դարձյալ ներսից ծրած՝ աղցանի համար. զնկան-1,5-2 փուր յուղի տարողությամբ, ներսը ջնարակված/ապակեներկ/, գործածվում էր յուղ կամ պանիր պահելու համար.**

**պուտուկ /կճուճ/ - երկու կողմից կանքերով աման՝ ջրալի կերակուրների համար.**

**ծափ - կարճ, լայն փորով աման ապուրի, հարիսայի, խաշի, քյաշկայի համար.**

**քյասա /քարամբ/ - բռնելու համար ունկերով լայն, հաստ, մեծ չանախ, որի մեջ լցնում էին ալյուր, հացահատիկ, կամ ամաններն էին լվանում.**

**չանախ - քյասայից փոքր աման՝ 4-5 մարդու կերակուրի համար, որը փուռն էին ուղարկում .**

**չինի - չանախից փոքր, քարակ, ներսից ջնարակված աման.**

**կուսիկ - մի մարդու համար նախատեսված աման.**

**պուլիկ - քիչսմոր պահելու աման.**

**փալզ /կուժ/ - տարրեր մեծության, բռնելու կանքով ջրի կամ գիճու աման:**

**Պղնձե ամաններ՝**

**մատաղի մեծ կաթսա, որ 8-10 փուր միս էր տանում. տրվում էր եկեղեցուն նվեր, որից օգտվում էին բռնորդ.**

**պղնձ - սպորական կաթսա 2-3 փուր տարողությամբ, որի մեջ ջուր էին տաքացնում և յուղ հալում.**

**լազան - բերանի մասում նեղ ու երկար, մեծ պղնձ, որն օգտագործվում էր բաղնիքում.**

**եղակ - լազանի ձևով, բայց նրա կեսից փոքր աման, որով բաղնիքում գոյից ջուր էին վերցնում.**

**փարխաջներ- բռնելու կանքերով տարրեր չափերի ջրի ամաններ. դրանց մեծ չափերով գործածվում էր յուղ հալելու կամ դավուրմա պատրաստելու համար.**

**դարձա - լայն փորով, կանքերով պղնձ՝ յուղի աման.**

**գյուզյում - փարչի նման պղնձ՝ ջրաման.**

**իսրուղ - տարրեր մեծության, կանքով, կողոքից ծորակով ջրաման, որի դեղինից փոքր չափինը օգտագործվում էր եկեղեցի ջուր տանելու ու օրինելու համար.**

**քալա - երկար կոթով լայն, տափակ աման՝ խավիծի կամ տապակելու համար.**

**շերեփ - կերակուր խառնելու համար.**

**քաղկեդոն** – ծակոտիներով, երկար բռնակով տափակ շերեփ՝ կերակորի քափը քաշելու համար.

**փլավաճիչ** – կլոր, լայն, ծակոտիներով, առանց կամքի.

**քասեր** - կերակորի զանազան մեծության ամանեներ.

**քաղիա** - թափից մեծ, կերակորի կամ մածնի աման.

**սինի** - կլոր մասուցարան՝ փուռը խմորեղեն տանելու համար.

**մուշուրքա** - դեղին պղնձից ջուր խմելու աման.

**դուշխանա** - տարրեր մեծության ամաններ կերակոր եփելու համար.

**յամադ** – սոխառածի փոքր աման.

**զառֆ** - փոքր սրճաման:

Փայտե իրերից օգտագործում էին դույլեր՝ կաթի ու ջրի համար, կերակրամանները /գուշ/, կաթի և լվացքի տաշտերը, հացի կլոր մասուցարանը /տեփուր/, հացի կլոր, միակտոր տաշտերը, մեծ ու փոքր տակառները, շերեփներն ու գրալները և այլն: Պղնձեն ամանները տարքա մեջ երկու մեծ տոներին անազապատվում էին ու մեծության կարգով շարք-շարք դարսվում թարեք ներում: XXդ. սկզբներից պղնձն ու կավե ամաններին փոխարինեցին էնակե ու այլումինե ամանները, թիթեյա տապականներն ու չուգունե կերակրամանները.<sup>11</sup> Հախճապակյա և ապակյա ամաններն ու բաժակները, որոնք մեծահարստության հենցադին բնորոշ սպասք էին լայն գործածություն չունեին, իրենց բանկության պատճառով դանդաղ էին նույր գործում միջին եկամուտներ ունեցող ալեքսանդրիների կենցաղ՝ հաճախ ոչ թե գործածության նպատակվ, այլ միայն ցուցադրության:

Հացն ու հացամբերքները (ձավար, բլրուր, փոխինը, երիշտա և այլն) ալեքսանդրապալցու կերակրացանկի հիմնական բաղադրիչներն էին, ուստի դրանց մշակումը, պատրաստումն ու թիթելը ևս մեծ արարողակարգ էր: Պատրաստությունն սկսվում էր ցորենի վերամշակումից: Ցորենը խաչվում, չորացվում էր, ապա տարվում ջրաղաց, որտեղ կեղևահանվում ու դրանից ձավար էր ծեծվում: Ուշ աշնանը թխում էին ճնուած հացը, որը հետո չորացնում ու շարում էին հացի համար նախատեսված հասուկ պահարանում կամ ջաֆարիկ վրա: Ալեքսանդրապոլում թխում էին տարրեր հացատեսակներ՝ լավաշ, բրոն, թափրափա, լիխում (վերջինս շաղախվում էր կարագով և խմորեղենի պարզունակ ձևն էր):

Բավականին աշխատատաք էր երիշտայի պատրաստումը, որի ժամանակ դրկից կամ ազգական կանայք ու աղջիկները միմյանց օգնում էին: Գյումրիում հաճախ փոխինդրով խաշի են պատրաստել, որը զյուղական ուստիստ էր, սակայն շատ սիրված էր, քանի որ թէ սննդարար էր, թէ՝ արագ պատրաստվող (թաքարյա ճաշ):<sup>12</sup> Ցորենից պատրաստում էին նաև նիշաստա (ածիլ)՝ խիստ սննդարար կերակրի հավելուկ էր, որը օգտագործվում էր բուժիչ նպատակներով:

Ամենօրյա կերակրատեսակները շատ բազմազան էին՝ տարրեր տեսակի շիլաները, փլավներն ու ապուրները, որոնք կրչվում էին բաղկացուցիչ հիմնական մասի անունով՝ ոսպով փլավ, բլրուրով փլավ, բրնձով փլավ, չորքանով փլավ, չրով թիրիք, շաղգանով յայնի, կորկոտապուր, պոչով ապուր, թանով ապուր, հաղլապուր և այլն:

Առանձին խումբ են կազմում պատուց կերակուրները: Տապակած սիրեխի զոխը պասի օրերի ամենաընդունված կերակորն էր. 4-5 զոխը թաքախում էին այսուրի խյուսի մեջ, ապա տապակում ձերով՝ ուժեղ կրակի վրա այնպես, որ երկու կողմերն էլ լավ կարմընն: Այս կերակորը զյումրեցիների մեջ հայտնի էր «պատու ձուկ» անունով: Պատահական չէր, որ թթվի կարամները բացում էին Նոր տարուն և ուսում մինչև Զատիկ: Ժողովուրդն ասում էր «Եշի եկավ վենձ պասը, բացեք գրիսի կարասը»:<sup>13</sup> Ծննդյան և Զատիկի թաքախմանը բրնձով փլավի հետ անպայման տապակում էին կանաչ լոբի՝ փրան պաստերով ձվածեղ: Ալեքսանդրապոլում, ի տարրերություն զյուղացիների, պասին ձավարով տողմա-

<sup>11</sup> Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, Լեմինական, էջ 7364-7369:

<sup>12</sup> Հ. Գ յ ո ւ ե ց յ ա ն, Գյումրի, էջ 38:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 24:

յից բացի պատրաստում էին բրնձով տոլմա. սոխառածի հետ խառնում էին բրինձ, քիշմիշ, ծիրանի քաղցր չիր, լավ խառնելուց հետո փաթառում բրու կաղամբի թերթերով, շարում պուտուկի մեջ, կրկնակի ծավարով ջոր լցնում և դնում բրցն անցած բրնիք մեջ: Պասուց կերակուրներ էին պոշով ապուրը (նիվում էր Մեծ պասի երկուշարքի օրը, որը ուժեղությամբ հրավիրում էին նոտ հարազատներին), ավելուկով ու բելուկով աղցանները, խաշած կարտոֆիլը, կարմիր լորին, բակլան, սխտող, որոնք նատուցում էին աղով, պղպեղով ու ծերորով (ծիտրոն) համեմված:

Տնական օրերին ալեքպուցու հարզի կերակրատեսակներից էին բարար բրտակին, տոլման, սարքի քյուֆրան, քարի քյուֆրան, դազան խորովածը, բավա քիֆրասին, չանաղը, բավան, քյալլան և այլը: Վերջին երեքը փոռում էին պատրաստում և արհեստավորների շրջանում հարզի կերակուրներ էին: Ալեքսանդրապոլի տանտիկները փոռում էին եկեղեց տախիս զաքան, փախլավան, շաքարլոխտմին, սիանչորակին (քիսկվիթ): Փոռում պատրաստվում ու տաք վիճակում փանովում էր գյումրվա յաղլին՝ արդար յուղով պատրաստված ու երեսին շաքարի փոշի ցանած խմբարերիկը: Վաճառքի համար բխում էին նաև սախտակ ալյուրով չորուկ:

Ծիսական կերակուրներն էին՝ Ամանորի պասուց տոլման, կաղամինի զաքան (տարեհացը), տարրեր պատկերներով կարկանդակները, Ծննդյան տոնի հարիսան, Տերուեղի խեճակը (աղանձ), Սր. Սարգսի փոխնորով խաշին ու կարկանդակները, Զատկի ցեյեզով փավը, Սր. Խոաչի քյաջրյան, Համբարձման կաքնապուրը, մատաղը, հոգեհացի խաշլաման, ատոնահաստիկը և այլն:

Գյումրու քաղաքային կերակուրները տարբերվում էին որոշակի նրբաքինք առանձնահատկություններով ու քաղցր ուտելիքների առատությամբ: Այդպիսիք էին քիշմիշով սոտուզ, դրմակ, քիշմիշով, մեղրով (կամ շաքարով) ճաշը, տապակած ծիրանի չիրը, ջեյեզով փավը (քիշմիշով, ծիրանի, ևս սալորի չրերով ու նշով), չորացրած սպիտակ թրով ձվածեղը, խորմով ձվածեղը, պաստերով ձվածեղը, դայմաղը (մեղրուսեր), հասուրան, զուրբիան: Խողողի թփով տոլման նոյնիսկ կերել են շաքարի փոշով ու դարչինով: Պայմանավորված քաղցր ճաշում ճաշատեսակների առատությամբ ու հարզիությամբ՝ Ալեքսանդրապուրում կային հատուկ նուրաքեղենի խառնութեր (Չանկի Խաչոյի, Ջանդարովենց), որտեղ բացատապես անուշեղեն և համեմունքներ էին վաճառվում:<sup>14</sup>

Ալեքսանդրապուրում ուտում էին օրը երեք անգամ՝ նախաճաշ, ճաշ և ընթրիք: Առավոտյան նախաճաշին անպայման թեյ էին խմում, ուտում հաց, պանիր, կարագ, խաշած ճու, եկուում էին հասութա կամ փոխնորով խաշի, իսկ պաս օրերին՝ խաշած կարտոֆիլ, լորի, երեխն հալվա կամ գարա: Թեյը մեծ մասամբ խմում էին կծովի, միայն շատ փոքր երեխայի և մեծ մասի թեյն էին քաղցր անում, որ «պատիկը վենձնա, մամն էլ դվաքից, ուժից չընկնի»:<sup>15</sup> Շաշին ուտում էին վերը թվարկած բազմազան կերակուրները՝ փալսներ, շիլաներ, ապուրներ և այլն: Ընդ որում տղամարդիկ հաճախ ճաշում էին աշխատավայրում: Ընթրիքն ուտում էին ճաշի ավելցուկը, կամ պատրաստում էին սպաս, կաքնով: Սովորաբար ամռանը սննդի մեջ մաս էր կազմում կաքնամքերը՝ կարգ, մածունը, սպասը և այլն:

Մինչև XIXդ. վերջ խիստ պահպանվում էր սեռատարիքային հստակ բաժանումը հացկերույթի ժամանակ: Նախ ուտում էին տղանարդիկ, ապա նոր՝ կանայք ու երեխաները: Ընդ որում երիտասարդ հարսները նախ կերակրում էին երեխաներին, հետո իրենք ուտում: Նորահարսը նոյնիսկ սկսուուց հետ հացի չէր նստում: XX դարակզբից, փոքր ընտանիքների թվի աճնան հետ կապված, նկատվում է միմյանցից առանձին հաց ուտելու սովորույթի վերացում: Խոսքը ամենօրյա ընտանեկան հացկերույթի մասին է: Կանանց ու տղամարդկանց առանձին հաց ուտեղությունը պահպանվեց ընդիուպ մինչև XXդ. վերջ, ծիսական հացկերույթների ժամանակ՝ հոգեհացի, մատաղի արարողություններում:

<sup>14</sup> Հ. Ա ռ բ ե կ յ ա ն, Ակնարկ Ալեքսանդրապուրու կերակրացամկից, ԾՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42-43:

<sup>15</sup> Հ. Գ ո լ ե ց յ ա ն, Գյումրի, էջ 54:

Հատկանշական է, որ մինչև Եվրոպական տիափի կահույքի մուտքը, նոյնիսկ դրանից հետո, ուսում էին գետնին նստած՝ ընդհանուր մի ամանից: Պահպանվել է նման հացկերույթի նկարագրություն. «Հացկերույթը նահապետական էր և հետաքրքիր: Հինգ կամ վեց մարդ միասին մեկ ամանից էին կերակոր ուտում և ավելի հետաքրքիր էր նրանց վլավ ուտելը. Մի մեծ պղճայական սինիով դնում էին առաջները, ուտում էին առանց հացի, ձեռքերը որքան վերցնում էր, տրորում էին սինիի վրա, լավ ամրացնում, որ հատիկները չքափի, բարալու արած՝ քաշում էին բերանները».<sup>16</sup>

Ինչպես ամենօրյա, այնպես է տոնածխական հացկերույթի պարտադիր մասն էր կազմում խմիչքը: Ամանորի սիրված ընպելիքը չի կոմպուն էր, որը մինչ օրս պահպանվել է գյումրեցիների կենցաղում: Ալեքսանդրապոլի տղամարդկանց սիրած ալկոհոլային խմիչքը օղիներն (րախի) էին, որնցից առավել տարածված էին Զավախքից թերված «հացի բախին» և Արարատյան դաշտավայրից ներմուծվող բրնողիները՝ «խուժան արաղ», առանց որի սեղան չէին նստում, ընդ որում, դրանք օգտագործվում էին ոչ միայն տանը, այլև դրանում: XIX<sup>ր</sup> կետերից լայն տարածում ստացավ գարեջուրը և շատ շուտով այն իր հատուկ տեղը գրավեց ալեքսանդրապոլի տղամարդկանց սննդակարգում: Քաղաքում մեծ թիվ էին կազմում պանդրկները, գինետները (միկիտան) և գարեջրատներն ու կրապակները, որտեղ արհեստավորները՝ աշխատանքից հետո կամ լնդմիջմանը և տարբեր գործերով քաղաք եկած հյուրերը, մի կտոր հաց էին ուտում, որը ուտենացվում էր թունդ խմիջների տարբեր չափարաններով: Գինին այնքան էլ տարածված չէր, չնայած այն ևս դրվում էր սեղանին տարբեր տոների կամ ծիսական արարողությունների ժամանակ:

Քաղաքային կենցաղում լայնորեն տարածված էին սուրճն (ևս սուրճին գուգահեռ օգտագործում էին բոված-աղացած գարուց պատրաստված ընպելիքը՝ «գայֆան») և թեյը, որոնցով հյուրախրում էին հյուրերին ընտանեկան տոների ու արարողությունների ժամանակ: Տղամարդիկ սիրում էին սուրճ խմել նաև սրճարաններում (գայֆախանա) և հանքառական ակումբներում (կլուբներ), որտեղ զրուցում էին քաղաքականությունից, քաղաքի անցուղարձից, գործարքներ էին կնքվում, կամ, որն ավելի ընդունված էր՝ ունկնդրում էին հայտնի աշուղների երգերը:

Քաղաքային կենցաղի առանձնահատկությունը հատկապես վառ էր դրսերդում հարսանեկան հացկերույթի ժամանակ ինչպես մասուցվող կերակրատեսակների բազմազնությամբ, այնպես էլ սպասքով, արարողակարգով և այլ տարբերով, որոնց հնարավոր չեղականորադարձականական:

## ТРАДИЦИОННАЯ ПИЩА И ТРАПЕЗА АЛЕКСАНДРОПОЛЯ

*Резюме*

*K. Базеян*

В статье рассматривается традиционная система питания александровцев. Пища, как и вся система питания, относится к числу наиболее стойких культурно-бытовых традиций. В наборах пищевых продуктов, способах их обработки, типах блюд, в традициях пищевого предпочтения или избегания, в организации и ритуале трапез отражается специфика городского быта Александрополя. Исходя из этого в статье представлен основной пищевой рацион городского населения, некоторые способы приготовления, периодичность приема пищи, способы заготовок. При этом выделяется повседневная, праздничная и ритуальная пища, а также предпочитаемые прохладительные и алкогольные напитки. Особое внимание уделено не только тому что люди едят, но и какой утварью и посудой пользуются и как их используют.

<sup>16</sup> Խայտաբար Զահրիյան, Հիշողություններ իին Գյումրիից, ԳԱԱՀ ՀԱՅ բանականության բաժնի արխիվ, FF I, էջ 8156: